ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՈՎՀ. Գ. ՂԱՊԱՐՅԱՆ

Ե՞րբ է սկզբնավորվում սովետական հայ գրականությունը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո՞՝ 1917—1920 թթ., թե՝ 1920 թ. նոյեմբերյան հեղափոխությունից հետո, երբ Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր։

Այդ հարցին դեռևս չկա մեկին պատասխան։ «Սովետահայ գրականության պատմությունը սկսվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումով»[1],— ընդունված կամ դրեթե ընդունված այդ տեսակետը, սակայն, չի համապատասխանում պատմական ճշմարտությանը։

Սովետահայ գրականության սկզբնավորումը իրականում տեղի է ունենում Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրերից, երբ դարերով անլուծելի հարցերը դալիս-հանդուցվում էին, լուծվում կամ սպասում լուծման, քաղաքացիական կռիվների թեժ բոցերում, երբ մահու և կենաց կռիվ էր մղվում իմպերիալիստական գիշատիչների, ներքին թշնամիների դեմ, հանուն սոցիալիստական հեղափոխության նվաճումների, երբ փոքր ժողովուրդների, հայ ժողովրդի համար արդեն դրված էին իսկական ազատության ու ազգային-սոցիալիստական վերածնության հիմքերը։

Սովետական գրականության ծնունդը նշանավորում էին ոչ միայն Մ. Գորկին, Վլ. Մայակովսկին, Դ. Բեդնին, Վ. Բրյուսովը, Ալ. Բլոկը (Ռուսաստան), Պ. Տիչինան, Վլ. Սոսյուրան (Ուկրաինա), Յա. Կուպալան, Յա. Կոլասը (Բելոռուսիա) իրենց նոր երկերով, այլև Հ. Հակոբյանը, Վ. Տերյանը, Ե. Չարենցը։

«Ասելով «անցյալ»,— գրում է Ե. Չարենցը 1923-ին,— մենք այսօր պատկերացնում ենք այն ամենը, ինչ որ գտնվում է 917-ի Հոկտեմբերից այն կողմը։ Պրոլետարական հեղափոխության հատու սուրը մի կարմիր խաղ քաշեց օրերում ու ժամանակներում այն ահեղ թվականին...»[2]։ Մեծ բանաստեղծի այդ ձևակերպման մեջ իսկ նկատելի է մեր հարցադրման պատասխանը։ Պրոլետարական հեղափոխության հատու սուրը, արդարև, «մի կարմիր խաղ քաշեց» նաև մեր անցյալի նախահոկտեմբերյան և նորագույն հետհոկտեմբերյան գրականության միջև, գրականություն, որը իր թեմատիկ-գաղափարական բովանդակությամբ, իր արվեստով բոլորովին նոր էր՝ սովետական, սովետահայ-սոցիալիստական։ Մի՞թե, օրինակ, սովետական կամ սովետահայ գրականության արժեքները չեն Տերյանի, Հակոբյանի, Չարենցի 1917—1921 թվականներին ստեղծած գրական հարուստ ժառանգությունը, Թումանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Զորյանի, Թոթովենցի նշանակալից երկերը՝ նույն այդ շրջանում ստեղծված։

---

1 Սովետահայ գրականության պատմություն, հ. 1, Ե., 1961, էջ 9։

2 Ե. Չ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1967, էջ 80։

Հեղափոխության բախտորոշ տարիների սոցիալիստական բովանդակությամբ հագեցած հայ գրականությունն անջատել Սովետական Ռուսաստանի գրականությունից — կլիներ մոլորություն։

Մեր գրականագիտության մեջ, իհարկե, կան ճիշտ բնորոշումներ սովետահայ գրականության սկզբնավորման մասին, սակայն դրանք մեծ մասամբ վերաբերում են առանձին գրողների կամ 1917—1921 թթ. առանձին երկերի, բայց ոչ բուն սովետահայ գրականության սկզբնավորմանը, իբրև գրական նոր ու ամբողջական մի հոսանքի, իբրև սովետական գրականության։

«Սովետահայ գրականության անցած ուղին» ուսումնասիրության մեջ, օրինակ, Աս. Ասատրյանը գրում է. «1917—1920 թթ. կարճատև ժամանակամիջոցը կարևոր նշանակություն ունի սովետահայ գրականության սկզբնավորման պատմության մեջ...»[3]։ Նա ի նկատի ուներ Հակոբյանի, Տերյանի, Արազու, Կուրղինյանի, Կամարու ստեղծագործությունները։ «Հակոբյանի՝ այս տարիների (1917—1920)... գրական գործունեությունը պետք է գիտել սովետահայ գրականության սկզբնավորման ու ձևավորման ընթացքի հետ օրգանապես կապված»[4]։

Մեկ այլ գրականագետ, Հ.Թամրազյանը, գնահատելով Վ. Տերյանի 1917—1920 թթ. ստեղծագործությունը, գրում է. «Նա [Տերյանը] դառնում է նոր աշխարհի ու նոր մարդու առաջին նշանավոր երգիչներից մեկը հայ պոեզիայի մեջ»[5]։ «Տերյանը սովետական և սովետահայ պոեզիայի առաջին սկսողներից է»[6],— ավելի պարզորոշ նկատում է Վ. Պարտիզունին։ «Վ. Տերյանի և մասնավորապես Ե. Չարենցի այս տարիների (1917—1920) հեղափոխական պոեզիան,— գրում է Ս. Աղաբաբյանը,— նշանավորում էր սոցիալիստական հայ պոեզիայի նոր բարձրությունը»[7]։ «Սովետահայ պոեզիայի առաջին նշանակալից ստեղծագործությունը,— այնուհետև գրում է նա,— որտեղ որոշակի սրությամբ արտահայտվեց հեղափոխական նոր էպոսի կերտման պահանջը, դարձավ նրա «Ամենապոեմը» (1920—1921)»[8]։

Խոսելով Չարենցի մասին՝ ռուս ականավոր բանաստեղծ Ն. Տիխոնովը գրում է. «Ինձ թվում է, որ սովետական գրականության, սովետական պոեզիայի առաջին հիմնադիրների մեջ է նա՝ մեծատառով գրվող այդ բանաստեղծը»[9]։ «...Նա ամբողջ սովետական պոեզիայի սկզբնավորողներից է,— գրում էր Պավել Անտոկոլսկին,— և նրա նշանակությունը գուրս է գալիս իր մայրենի լեզվի ու Հայաստանի սահմաններից»[10]։

Այսպես ուրեմն, սովետական կամ, ինչպես ընդունված է ասել, սովետահայ գրականության սկզբնավորումը տեղի է ունենում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության մարտերում։ Այդ տեսակետը հետզհետե ստանում է լայն ճանաչում, դառնում տիրապետող, ընդունվում նաև հայ սո-

---

3 Աս. Ասատրյան, Գրական-քննադատական ակնարկներ, Ե., 1951, էջ 9։

4 Սովետահայ գրականության պատմություն, հ. 1, էջ 259։

5 Հայ գրականություն, երկրորդ գիրք, դասագիրք միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի համար, Ե., 1957, էջ 266։

6 Վ. Տերյան. Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, էջ 765։

7 Սովետահայ գրականության պատմություն, հ. 1, էջ 107։

8 Նույն տեղում, էջ 108։

9 Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Ե., 1961, էջ 27։

10 Նույն տեղում, էջ 38։

վետական թատրոնի պատմության համար[11]։ Դարձյալ մի փաստարկում... «Հեղափոխության առաջին իսկ տարիներից,— ասված է «Կոմունիստ» ամսագրում,— այնպիսի գրականություններ, ինչպես ուկրաինականը, հայկականը, բելոռուսականը և ուրիշները, որոնք հարուստ տրադիցիաներ ունեին, ռուսների հետ միասին հարստացրին սովետական ժողովրդի հոգևոր ընդհանուր գանձարանը»[12]։

Սովետահայ գրականության սկզբնավորումը, սակայն, տեղի էր ունենում քաղաքական-գրական բուռն պայքարի շիկացած մթնոլորտում, պայքար, որը ծավալվում էր և գրական ընկերությունների միջև և նշանավոր գրողների շուրջը։

1919—20 թթ. սկզբունքային թեժ պայքար էր մղում Հայ գրողների կովկասյան ընկերությունը (կազմակերպված Թիֆլիսում, 1912-ին) և Հայաստանի գրական ընկերությունը (կազմակերպված Երևանում, 1919-ին)։ Նրանք ունեին քաղաքական տարբեր կողմնորոշում։ Առաջինը կողմնորոշվում էր դեպի Սովետական Ռուսաստանը, հայ ժողովրդի փրկությունը տեսնում միայն սոցիալիստական հեղափոխության մեջ, երկրորդը՝ Եվրոպա, ամբողջությամբ հակադրվում Սովետական Ռուսաստանին։ Առաջին գրական ընկերության ղեկավարն էր հայ ազգային մեծ բանաստեղծ Թումանյանը, երկրորդինը՝ դաշնակցության լուսավորության նախարարը։

«Հրեշավոր ժամանակից» սասանված Թումանյանը ելք էր որոնում։ Եվ այդ ելքը նա տեսնում էր բացառապես Սովետական Ռուսաստանի, սոցիալիստական հեղափոխության մեջ. «Միայն Ռուսաստանը մեզ կփրկի»,—[13] գրում էր նա 1920 թ. նոյեմբերի 19-ին։ Մինչդեռ նորաստեղծ Հայաստանի գրական ընկերությունը իր պայքարի սլաքն ուղղում էր հենց Սովետական Ռուսաստանի դեմ։ «Քաղաքակիրթ երկրների համալսարաններին ու գիտական ընկերություններին» ուղղած նրա 1920 թ. սեպտեմբերի 15-ի կոչում ասված է. «Միայն եվրոպական հզոր պետությունների միջամտությամբ հնարավոր է... փրկել մարդկությունն ու կուլտուրան անպատիվ կորստից»[14]։

Գրական պայքարը ծավալվում էր նաև առանձին գրողների շուրջը՝ առանձնապես՝ Վահան Տերյանի և Եղիշե Չարենցի։ Նրանք ոչ միայն Հոկտեմբերի երգիչներ էին, այլև կոմունիստական կուսակցության անդամներ, Տերյանը՝ Լենինի հավատարիմ զինակիցը, Չարենցը՝ զինվոր կարմիր բանակում։ Ոմանք գտնում էին, որ Տերյանի պոեզիան իբր կարված է սոցիալական հողից, իբր նա ստեղծագործում է «ներքին մաշող ախտից ազդված»[15]։ Ոմանք էլ ուղղակի քամահրանքի էին ենթարկում բանաստեղծի քաղաքական գործունեությունը. «Նաիրի երկրի» երգիչը,— գրում էր Դավիթ Անանունը,— հեռավոր հյուսիսում մտորում էր Հայրենիքի վերածնության մասին։ Միամիտ Վահան,— եզրակացնում էր նա,— որ ցանկալին ու իրագործելին նորից ու նորից շփոթում էիր իրար հետ...»[16]։ Տերյան—քնարերգակը իբր «մոլորվել է»,

---

11 Հայ սովետական թատրոնի պատմություն, Ե., 1967, էջ 6։

12 «Коммунист», 1967, № 9, էջ 11։

13 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1945, էջ 449։

14 «Հայաստանի կոոպերացիա», 1920, № 17. էջ 717—718։

15 «Մշակ», 1917, № 235։

16 «Հայաստանի կոոպերացիա», 1920, № 13, էջ 525։

զբաղվում է քաղաքականությամբ, «խաչ է դրել նախահոկտեմբերյան իր ստեղծագործության վրա», իբր «փշուր-փշուր է եղել իր քնարը...»[17]։

Այդ վերաբերմունքը շարունակվեց բանաստեղծի մահից հետո ևս։ Տերյանի քաղաքական հակառակորդները, սակայն, չէին մնում անպատասխան։ Խորապես վիրավորված ու վրդովված՝ Ստեփան Զորյանը 1920 թ. գրում էր. «Այն բանաստեղծը, որ հայ լեզուն հասցրել է մի զարմանալի նրբության, տալով նրան արտահայտելու մոգական կարողություն, նա, որի երգերն իրենց անկեղծ, լուսեղեն զգացումներով ու հմայիչ երաժշտականությամբ դյուրթում են ամեն մի կիրթ մարդու, նա՛, որ մի ամբողջ տասնամյակ է ահա իր ազդեցությամբ իշխում է մեր բանաստեղծական աշխարհում, այդ բանաստեղծի մահը մատնվում է անուշադրության միայն նրա համար, որովհետև նա եղել է կոմունիստական կուսակցության անդամ»[18]։

Մի փոքր «այլ» էր վերաբերմունքը Չարենցի հանդեպ։ Դաշնակցական մամուլը փորձում էր «մշակել» հեղափոխությանն ընդառաջ գնացող երիտասարդ հզոր տաղանդին, նրան շեղել հեղափոխության ճշմարիտ ճանապարհից, մղել դեպի արկածախնդրության փակուղին։ «Կույր տարերքը» հոդվածում, «քննարկելով» Չարենցի «Բոլորին, բոլորին, բոլորին» երեք ռադիոպոեմները, Դավիթ Անանունը զարմանքով հարցնում էր, «թե հանուն ի՞նչ գաղափարի է արտահայտվում այդքան հուզմունքը, հանո՞ւն «կարմիր Ապագայի»[19]։ Հոկտեմբերյան հեղափոխությունը համարելով «կույր տարերք», Չարենցին՝ «կույր տարերքի» արտահայտիչ, նա եզրակացնում է. «Ռուսական հեղափոխությունը զոհ գնաց կույր տարերքին։ Նա բարձրացրեց ժողովրդական հատակի դիրքը, պղտորեց սոցիալիզմի անապական լիճը և կենդանական բնազդը հայտարարեց աշխարհաշեն գործոն...»[20]։

Գրական «տեսաբանն», այնուհետև, Չարենցին ուղղակի առաջարկում է հրաժարվել Հոկտեմբերյան հեղափոխությունից՝ նրա մեջ տեսնելով դաշնակցական Հայաստանի քաղաքական վերածնության ոչնչացումը։ «Մեզ կորստի կտանի Ռուսական տարերքը»[21],— ասում է Դավիթ Անանունը իր մեկ այլ՝ «Մեր քաղաքական դեգերումները» հոդվածում։

Նույն կերպ էր վարվում նաև դաշնակցության «Հառաջը»։ «Ամբոխները խելագարված» պոեմը համարելով բանաստեղծական «խոյանք», «բոլշևիկյան կռիվներից մի դրվագ... բանաստեղծորեն կերտած»։ Գ. Նաիրյանը, սակայն, իր «Հայ գրականությունը 1919 թվին» հոդվածում գտնում է, որ իբր թե Չարենցը «հածում է անորոշության մեջ», նրա երգը՝ բովանդակազուրկ է, «դառնում է միակերպ և բթացնում ընթերցողի ընկալական կարողությունը»[22]։

Պայքարը Չարենցի և Տերյանի դեմ, ակներև է, պայքար էր նրանց պոեզիայի հեղափոխական պաթոսի դեմ, Հոկտեմբերյան մեծ նվաճումների դեմ, բոլշևիկյան գաղափարների հարաճուն ազդեցության դեմ։

Ուղղակի և անուղղակի հարձակումների էին ենթարկվում ոչ միայն Տերյանը, Չարենցը, այլև անտեսվում էր, բացառվում 10-ական թվականների,

---

17 «Բանվոր», Բաքու, 1918, № 16։

18 «Հայաստանի կոոպերացիա», 1920, № 13, էջ 513։

19 Նույն տեղում, 1920, № 15, էջ 626։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, № 18, էջ 766։

22 «Հառաջ», 1920, № 39։

1917—1920 թթ. հայ գրականությունը ամբողջությամբ։ «...Հայ գեղարվեստական գրականությունը սկսեց հանկարծ ամայանալ»,—գրում էր Վ. Փափազյանը իր «Գրական ակնարկներում» (1908)։ «Եվ հիրավի,— ասում է նա,— որոնել 1904-ից հետո գեղարվեստական գրականության որևէ լուրջ արդյունք հայերի մեջ՝ կլիներ ապարդյունք»[23]։ «Այժմ գեղարվեստական գրականություն ռուսահայերի մեջ չկա,— պնդում է նա։— Մի քանի տարի է, որ նա ամայի է։ Ամայի էլ կմնա...»[24]։ Փափազյանի «Գրական ակնարկներ» հոդվածաշարի հատվածներից մեկն ուղղակի խորագրված է՝ «Ռուսահայ գրականության անկումը» (1910)։ «Սնանկություն է բացարձակ. գրական, մտավորական սնանկություն»[25]։ 10-ական թվականների գրականության բացասման Փափազյանի այդ ոգին արտահայտություն է ստանում նաև հետագա տարիներին։ «Հայ ժողովրդի գրականությունը, ինչպես և հայ կյանքը,— գրում է նա 1919-ին. -ապրեցին իրենց վտանգավոր և ծանր ճգնաժամը»[26]։

Այդ ըստ էության և պատմականորեն բացահայտ սխալը, դժբախտաբար, մեծ տարածում է ստանում։ Ստեղծվում է մի ամբողջ տեսություն այն մասին, որ իբր պատերազմի, փորձությունների, նաև հեղափոխության փոթորիկների մեջ դադարում կամ գրեթե դադարում է ստեղծագործական միտքը, որ իբր գեղարվեստը ծնվում է միայն անդորր օրերին ու խաղաղության մեջ, որ հեղափոխությունն իր հուժկու դինամիկայով գրականությունը զրկում է բազմազանությունից, գրողին՝ ինքնատիպությունից։ Հեղափոխությունը «իր արագության մեջ, իր հարաճուն պտույտի մեջ,— գրում է Փափազյանը 1917-ի նոյեմբերին,— ի մի է ձուլում ամեն գունագեղություն... կատաղորեն արշավող դեպքերն ու շարժումները ի մի են ձուլում կյանք բոլոր արտահայտությունները և նրանց նուրբ ու գեղեցիկ այլազանությունները... Այլևս ոչ ոք չի գտնում ժամանակ, տրամադրություն և նույնիսկ ցանկություն՝ մտածելու ինքնատիպ գույների մասին»[27]։

10-ական թվականների, նաև հոկտեմբերյան տարիների մեծ գրականության բացասումը նոր մակաբերտեր էր կուտակում հետագա տարիներին ևս։ «Մինչև Հոկտեմբերը հայ գրականությունը իր գոյության վերջին էպոխայում, ինչպես և բոլոր մյուս գրականությունները, ընթացել է սկզբում բարձրացող և ապա դեպի անկում գնացող բուրժուազիայի իդեոլոգիայի դրոշի տակ,— գրում էր Հարություն Սուրխաթյանը 1929 թ.։— Իսկ հայ գրականությունը,— շարունակում է նա,— բացի այդ իր գոյության վերջին տարիներում՝ շնորհիվ երկրում ստեղծված դժնդակ պայմանների-անվերջ ավերի և կոտորածի-ուղղակի դատապարտված է եղել բնական դանդաղ մահացումի»[28]։ Նա, այնուհետև, ավելի հեռուն է գնում. «Երբ հնչեց Հոկտեմբերյան հեղափոխության որոտը,— ասում է նա,— ինչպես հայ ազգային ինտելիգենցիան ամբողջապես, այնպես էլ հայ ազգային գրողները բոլորովին կորցրին իրենց գլուխը», իբր «Հայ գրականությունը, որպես արվեստ, գրեթե դադարել էր գոյություն ունենալուց։

23 Վրթանես Փափազյանը գրականության մասին, Ե., 1962, էջ 100։
24 Նույն տեղում, էջ 108։
25 Նույն տեղում, էջ 109։
26 «Պատանի», գրական-գեղարվեստական ալմանախ, 1919, № 5։
27 «Համբավաբեր», 1917, № 36, էջ 703։
28 Հ. Սուրխաթյան, Հետ—Հոկտեմբերյան հայ գրականություն, Ե., 1929, էջ 47։

գոյություն ուներ միմիայն նացիոնալիստական մոտիվների ականջ խլացնող թմբկահարություն»[29]։

Փափազյանի, Սուրխաթյանի և այլոց նման դատողությունների սխալ ընթացքը պայմանավորված էր ոչ ամենևին թշնամությամբ, այլ բացառապես պատմական երևույթների նկատմամբ պատմական չափանիշի և ճշմարտության բացահայտ անտեսմամբ։ Մեր դարաշրջանի առաջին քսանամյակը մի պանգվածային հասկացություն չէ։ Այն բովանդակում է չափազանց հարուստ մի պատմաշրջան, իր հասարակական-քաղաքական բարդ իրադարձություններով և սուր բախումներով։ Այն բովանդակում է ռուսական առաջին հեղափոխությունը, նրան հաջորդող ռեակցիայի տարիները, այնուհետև իմպերիալիստական առաջին համաշխարհային պատերազմը, նրա ընդերքից ծնված Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական, ապա և Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, որը նոր դարաշրջան է մարդկության պատմության մեջ։ Ուրեմն, տարբեր են այդ ժամանակաշրջանները և նրանց բովանդակությունը, նրանց պատմական-հասարակական նշանակությունը, տարբեր են և նրանց հետևանքները մարդկության պատմության մեջ, տարբեր՝ նրանց գեղարվեստական ցոլացումները։ Այդ քսանամյակում իրար արագորեն հաջորդող հասարակական խոշոր շրջադարձերը, հասարակական մեծ հեղաբեկումները նշանավորում էին գրական նոր երևույթներ, նոր ձևեր, և գրական նոր անուններ։ Կտրուկ շրջադարձերի ժամանակ միշտ էլ փոխվում են գրական շատ երևույթներ, գրական շատ մեծություններ իրենց տեղը զիջում են գրական նոր մեծություններին։ Պատմական-գրական այդ օրինաչափություններն են, ահա, թելադրված պատմության երկաթյա կամքով ու անհրաժեշտությամբ, որ մնացել են անհասկանալի մեր այդ գրականագետ-մեկնաբանների համար։ Ու այդ պատճառով էլ նրանց «տեսությունները» ամենևին չեն արտահայտում պատմական ճշմարտությունը, չեն բացահայտում գրական խոշոր իրողությունները։ Բացահայտ սխալ է խոսել գրական հգնաժամի, գրականության դանդաղ մահացման, արվեստի անկման մասին։ Բացահայտ շփոթության հետևանք է հայ պրոլետարական-հեղափոխական պոեզիան, որ ձևավորվեց 1905—1907-ին, սովետական-սոցիալիստական մեծ բովանդակություն արտահայտող հայ սովետական գրականությունը, որ սկզբնավորվեց 1917—1921-ին, համարել «միմիայն նացիոնալիստական», իբրև ստեղծված «բուրժուազիայի իդեոլոգիայի դրոշի տակ»։ Պատմական ճշմարտությունը և գրական իրողությունն այն է, որ միայն 1917—1921 թթ. ստեղծվում է, արդարև, մի պատկառելի գրականություն՝ հարուստ գրական տեսակներով ու ժանրերով, գաղափարական բովանդակությամբ ու արվեստով ամբողջովին նորարարական, որը կարող է գալիք սերունդների հետ խոսել, իբրև Հոկտեմբերյան մեծ հերոսամարտերի, իբրև հայ ժողովրդի, իրոք, մարտիրոսական մաքառումների ու սխրագործությունների գեղարվեստական տարեգրություն։

1917—1921 թթ.՝ հայ ժողովրդի համար բախտորոշ այդ ժամանակաշրջանում, հեղափոխության իսկ մեծ շնչի տակ, օրգանապես և զարմանալի ուժով միահյուսվում-միաձուլվում էին ստեղծագործական հայ հազարամյա և աննախադեպորեն նոր ծնվող սոցիալիստական գրական ավանդները։ Այդ ժամանակաշրջանում սկզբնավորվող հայ սովետական գրականության ամենաբնորոշ

---

29 Նույն տեղում, էջ 48։

հատկանիշը, ուրեմն, դասական ժառանգության լավագույն ավանդների և նորարական գրականության օրգանական միահյուսումն է։ Չարենցի ռադիոպոեմների հետ մի զարմանալի ուժով հնչում էին նաև բանաստեղծությունների «Տաղարան» շարքը, Թումանյանի քառյակներն ու լեգենդները, Իսահակյանի պոեմները, Տերյանի, Հակոբյանի հոկտեմբերյան երգերը։ Մի կողմից հայկական դասական քնարերգության՝ Նարեկացի, Քուչակ, Սայաթ-Նովա, հանդեպ խոր զգացմունք ու սրբազան ակնածանք, մյուս կողմից՝ հենց նրանով իսկ հարստացած հեղափոխական իսկական նորարարական պոեզիայի ստեղծում։ Այնքան ներդաշնակ ու միակտուր հյուսվում էին «հինը» և նորը, արվեստի «հին» և նոր արտահայտչաձևերը։ Կաքելի է ամենևին չտարակուսել, որ հայ դասական ժառանգության հանդեպ նման պաշտամունքը խորապես տոգորված էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, և այն բացառապես ուղղված էր մեծապետական, վելիկոռուսական և տեղական շովինիզմի դեմ, թուրքական ցեղասպանության դեմ, համաշխարհային պատերազմի հրձիգների իմպերիալիստական-նվաճողական անսանձ ձգտումների դեմ։ Արնատենչ տիրակալներին մեր գրողները հակադրում էին ինքնապաշտպանության իրենց միակ զենքը՝ հայրենասիրական ջերմեռանդ երգերը, հակադրում իրենց ժողովրդի հոգևոր հազարամյա մեծ արժեքները, որը և արևավառ հոգևոր երկիր Հայաստանը։ Այսպես ահա ծնվեց մեծ Չարենցի ռադիոպոեմների կողքին նաև «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը։

Իմ կարոտած սրտի համար ո՞չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՞րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում։

«Դա մեր հինավուրց երկրի համապարփակ գիմանկարն է,— ասում է Մարտիրոս Սարյանը, խոսելով այդ բանաստեղծության մասին։—Մեր վշտերի ու ձգտումների, պատմության դաժան արհավիրքներին դիմակայելու մեր տիտանական զորության գեղարվեստական խտացումն է»։ Այդ բանաստեղծությունը, այնուհետև, եզրակացնում է մեծ արվեստագետը, հնչում է «իբրև և՛ աղոթք, և՛ երդում...», հնչում «իբրև ազատության հիմն»։

Այդ ժամանակաշրջանում՝ 1917—1920 թթ., սկզբնավորվող հայ սովետական դրականության մյուս առանձնահատկությունն այն է, որ իր գաղափարական ուղղվածությամբ մի կողմից հաստատում էր արդեն ստեղծված սոցիալիստական հարաբերությունները բուն Ռուսաստանում, որտեղից նա ստանում էր մարտնչելու ուժ և կորով, մյուս կողմից՝ անդուլ պայքար ծավալում սովետական կարգեր հաստատելու նաև հայրենի երկրում։

Բնական է, որ ազգային-սոցիալիստական վերածնության համար մղվող գաղափարական պայքարում, որի ակունքը Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունն էր, չէր կարող անհետևանք մնալ ինչպես հայ հասարակական-քաղաքական կյանքում, այնպես էլ գեղարվեստական գրականության համար։ Ահա ինչու պատմական իրողությունը և ճշմարտությունը անհրաժեշտորեն թելադրում են, որպեսզի սովետահայ գեղարվեստական գրականության սկզբնավո-

բումը դիտել ոչ թե Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, այլ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հերոսամարտերում, երբ վճռվում էր նաև հայ ժողովրդի բախտը։

Այդ է պատմական իրողությունը և պատմական ճշմարտությունը։

СТАНОВЛЕНИЕ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

О. Г. КАЗАРЯН

Резюме

Когда зарождалась советская армянская литература? После Великой Октябрьской социалистической революции, в 1917—20 гг., или после ноябрьской революции 1920 г., когда в Армении была установлена советская власть?

На основании исследования богатого фактического материала вырисовывается та историко-литературная реальность и истина, что становление советской армянской литературы происходило уже в период героических боев Великой Октябрьской революции, когда решалась также судьба и армянского народа, а не после установления Советской власти в Армении.

Своеобразие советской армянской литературы, зародившейся в острой политической и литературной борьбе, заключается в том, что она, с одной стороны, утверждала и защищала великие социалистические завоевания, с другой—вела активную борьбу за утверждение Советской власти в самой Армении, связывая ее единственное спасение и путь национально-социалистического возрождения лишь с Советской Россией.